

ՔԵԶ ՀԵՏ ԵՆՔ, ԵՐԿԻՐ

# ԳՅՈՒՂ ԽԱՅԻՎ — ՍԱՀՄԱՆԻՆ ԿԱՆՉԱԾ ԽԱԳԱԿԻՐ ԱՍՊԵՆՏ (ՄԵՐ ՀԱՏՈՎ ԹՂԹԱԿԻՑ ՍՈՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ԵՂԵԼ Է ՍԱՀՄԱՆՈՍ)



Արարատը Խաչիկ գյուղից:

Ոլորապտույտ ճանապարհը, կարծես, երկինք է տանում – Մարն ի վեր, – ինչպես կասեր մեծն Թումանյանը: Գնում ենք, որ հասնենք ԽԱՉԻՎ (ՀՀ հարավ-արևմտյան սահման, հեռավորությունը մարզկենտրոնից 47 կմ, մայրաքաղաքից 127 կմ: Օճվի մակարդակից բարձր է 1850-2773 մ, բնակչության թիվը 1000-ից մի փոքր ավել):

Խաչիկը երեք կողմից շրջապատված է թուրքերով, բայց խաչիկցին ասում է այդ մենք ենք երեք կողմից հրսկում իրենց և այն էլ վերևից... Լույսինակ Մասինսերով Խաչիկը վերևից է հիանում որպես կապույտ օվկիանոս լողացող գույգ առագաստներ, որոնք չեն լքում հորիզոնը ով գիտի քանի հավիտենություն:



Գյուղի համայնապատկերը:

սննդի օբյեկտներ, զոհվածների հուշարձան և վերջապես գյուղամիջյան սուրբ Աստվածածին եկեղեցի... Եկեղեցու պատմությունը շատ նման է սովետի օրոք բնակիչների պահեստ դարձած շատ եկեղեցիների ճակատագրին: Այն նոր կյանք ու շնչառություն ստացավ վերջին տարիներին, երբ գյուղի երիտասարդ քահանան վճռեց ճշմարտապես ծառայել Աստծուն, և լինել «Լույս խավարում, ջուր անապա-



Խաչիկ գյուղի ապագան՝ «րեխերով»:

րիչ ու ստեղծագործ մարդն այստեղ ապրել է շատ վաղուց... Շարունակում ենք հաղթահարել ոլորապտույտ ճանապարհը... Սպասիր, մի պահ կանգնիր այս բարձունքում (դիտարան ենք ասում): Հեռվում Արարատն է, ներքևում մեր ցավերի վկա Մայր Արաքսը, Արարատյան դաշտը, Շարուրի հարթավայրը. ապա հակառակորդի դիրքերն ու բնակավայրերը... Մեզից քիչ այն կողմ մեր դիրքապահներն են... Երանց ներկայությունից գոտեպղծված առաջ ենք շարժվում: Վերջին ոլորանից դուրս ենք գալիս և գյուղը զարմանալի ՄԵՆԱԿԻ ու սահմանին խաչված ԽԱՉԱԿԻՐ ԱՍՊԵՆՏԻ նման դիմավորում է մեզ: Դու անձանոթ, հեռու ֆրանսիաներից եկած պարոն, գուցե տագնապում ես այս մարդկանց փոխարեն, ովքեր մեծ աշխարհի իրենց անկյունում ապրում են խաղաղ առօրյայով զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ, ունեն դպրոց, կուլտուրայի տուն, գյուղապետարան, բուժկետ,

տում», լինել Բարի հովիվ, ով Սիրո, Հույսի և Հավատի սերմեր է ցանում ամեն օր վատահ, որ մի օր բերքահավաք է լինելու առատապես... ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ նաև գնդերեց քահանա է, զինվորի ընկերն ու բարեկամը, խորհրդատուն և ուսուցիչը: Երբ նախաձեռնությամբ 100 տարվա ընդմիջումից հետո 2020 թ. օգոստոսի 14-ին սուրբ Աստվածամոր հայտնության օրը (Խաղողօրհներ), պատարագ մատուցվեց Քարկոփում: Այդ օրը Խաչիկի լինելության վկայականի Խոտակերաց վանքի կանչով ու հրավերով դեպի 5-րդ դարի տաճար էին շտապում գյուղացիներ, աշխարհափյուռ խաչիկցիներ, լրագրողներ, նկարիչներ, օպերայի և կինոյի աստղեր: Տոն էր զարթոյի, խաղողի, ինքնաձանաչման, համաժողովրդական, համախաչիկյան... Տոն էր նաև այն ոչ հեռավոր օրերին, երբ գյուղի մասին կինո էր նկարահանվում: Ոչ-ոք չէր զարմանում,

որ երկու ամիս շարունակ գյուղում հանդիպում էր ֆրանսահայ հայտնի դերասան և ռեժիսոր Մերժ Ավետիքյանին, դերասաններ Արսինե Խանջանին, Միքայել Պողոսյանին, Միքայել Դովլաթյանին, նաև ֆրանսիացի շատ այլ արտիստների: – Գնացի նք Վահանենց տուն (դա նկարահանման հրապարակն էր), – հնչում էր Ավետիքյանի հրահանգը: Մասնակից ու դերակատար էր ամբողջ գյուղը:



\*\*\*

Գյուղի ս. Աստվածածին եկեղեցում գրուցում ենք արժանապատիվ քահանա Տեր Հովհաննես Մաթևոսյանի հետ.

– **Հարգարժան Տեր Հովհաննես Մաթևոսյան,**  
Այս ամենը, օրերի և ավիսների տարբերությամբ բաժանվեց պատերազմից առաջ, և պատերազմից հետո... Աշխարհն, այո, շուտ եկավ: Այստեղ էր, որ ուժ էր պետք դաժան պարտությունից հետո խոսքեր ու քայլեր գրունել մարդկանց կրկին կյանք վերադարձնելու: 44 օր տևած պատերազմից քիչ անց արդյոք դժվար չէր այցելել Դաղիվանք և մասնակցել սուրբ Պատարագին.



Տեր Հովհաննես Մաթևոսյանը զինվորների հետ:

...Հետո կզան ֆրանսիացիներն իրենց փարիզները և նամակ կգրեն Վահան Մարգարյանին. «Եղբա յր, մենք խաչիկցիներից ապրել ու պայքարել սովորեցինք, la merci...»



Այս հրաշք տղան տանկիստ, ժամկետային զինծառայող Թաթուլ Աբրահամյանն է Խաչիկ գյուղից, ով ռազմականակառուց առաջնագծում խոցել է բազմաթիվ տանկեր, անգամ իր տանկի պայթյունից հետո էլ մինչև վերջ կռիվ է տվել վիրավորվելով ռաքից: Հասցիտալ տանկում ճանապարհին թշնամին պայթեցրել է մեքենան և Թաթուլը գոհվել է:

ԹԱԹՈՒԼ ՀԵՐՈՍ Է, ՈՎ ԿՈՎԵՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒ ՉԱՂԱՄՏ ՏԱՐԻՆԵՐԸ ՄԵԶ ԼԿԻՐԵՑ:

– Ես դա արել եմ մեծ սիրով ու պատասխանատվությամբ, դա օրվա հրամայականն էր: Պատերազմը մենք, ցավոք, նմանեցրել էինք ֆուտբոլային խաղի, որ սկիզբ ու վերջ ունի: Մեր ազգի պատերազմը Տիգրան Մեծից հետո էլ միշտ շարունակվել է և հիմա էլ չի ավարտվել: Եթե մեր պատկերացումների մեջ այն խաղի նման է, ապա մի տխրեք, դեռ ընդամենը «առաջին խաղակեսն է ավարտվել» ու մի քիչ մշուշ կա: Մշուշը երբեք միանգամից չի ցրվում, մի քիչ ՀԱՄԵՐՈՒԹՅՈՒՆԸ չի խանգարի, Ստեփանակերտը շենացներ չի խանգարի, մեր վիրավորների և մարտիրոսների ընտանիքների բոլոր սեռակի վերքերը ամոքելը չի խանգարի, հավատը չկորցնելը՝ կհուսավատի, ժպտալն ու ամուր գրկելը կօգնի «ընկածին»:

Եթե պարտվել ենք, ապա մեր եսին, մեր սխալ սովորություններին, մերձավորին, հայրենակցին մեր անձի պես չսիրելուն:

Հեշտ է հաղթողի կողքին կանգնելը, հեշտ է ուժեղի կողքին կանգնելը: Իսկ մեր հայրերը պատվիրել են, որ մեր «հիվանդ գառին» ուրիշի «առողջ գայլի» հետ չփոխենք: Մի քիչ որ համբերենք, շատ բան Աստված կբացի մեզ համար: Զարյաց փոքրագույնով Աստված փրկեց ու ապրեցրեց: Դժվարությունները մեզ պնդացնում են ոչ միայն ռազմի դաշտում:

– **Ի՞նչ կասեք, ինչպե՞ս ենք ապրելու առանց նրանց առանց մեր «կորած» սրբավայրերի:**

«Կորած» սրբավայրերի մասին. Ինձ համար սրբավայր է հանուն պատկանելության նահատակվածի շիրիմը, իր մոր որովայնը, իր զավակի միտքը, սիրտն ու հոգին ու հիշողությունը: